

ՍԵՊԸ ՍԵՊՈՎ ԵՆ ՀԱՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետության վերադարձը միջազգային քաղաքականության թատերաբեմ հանգեցրել է նրան, որ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրը աննկատ կերպով դարձել է միջազգային քաղաքականության առաջադրանքներից մեկը:

Սա որքան օրինաչափ ու տրամաբանական, նույնքան էլ պարտավորեցնող իրողություն է, որի հանդեպ, ի հակադրություն Թուրքիայի, մինչ օրս այդպես էլ չենք մշակել պետական քաղաքականություն: Ավելին՝ վերջին շրջանում այս կարևոր հիմնախնդրի շուրջ որոշակի հայեցակարգ մշակելու գործով զբաղվում էին նաև Արևմուտքի երկրներն ու նրանց սպասարկող ուղեղային կենտրոնները: Հայոց ցեղասպանության **պատմությունը** ճանաչելու, բայց հայ ժողովրդի **իրավունքների** վերականգնման հիմնախնդիրը կրկին **շրջանցելու**՝ զույգ սկզբունքների վրա հիմնվող այդ քաղաքական հայեցակարգը լիովին բացահայտվեց 2008-ին սկզբնավորված հայ-թուրքական «երկխոսության» ժամանակ:

Գիտակցելով, որ Հայոց ցեղասպանության ճանաչումների շարքը կամ «հայկական ցունամին» մոտեցնում է «վճռական խոսակցության» պահը, և տեղյակ լինելով Արևմուտքում մշակվող ծրագրերին, Թուրքիան նույնպես, դեռևս 2001 թվականից՝ Ֆրանսիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումից հետո, ստեղծել էր «Յեղասպանության վերաբերյալ անհիմն պնդումների դեմ պայքարը համակարգող խորհուրդ» կոչվող մի մարմին: 2006 թվականից այն անցել էր օրվան արտագործնախարար ու փոխվարչապետ **Աբդուլլա Գյուլի** անմիջական ղեկավարության տակ: Անցած տարիներին օգտվելով արևմտյան ռազմավարների վերը նշված «**պատմությունը** ճանաչելու, բայց իրավունքները **շրջանցելու**» հայեցակարգից, այդ հանձնաժողովը մշակել է իր քաղաքական ռազմավարությունը: Ուստի հանձնաժողովի նախագահից Թուրքիայի նախագահ դարձած **Աբդուլլա Գյուլը** սպասում էր հարմար պահի՝ իր իսկ մշակած ռազմավարությունը կյանքի կոչելու համար: Նման հնարավորություն

Բ(Ը) տարի, թիվ 1(29), հունվար-մարտ 2010

ՎԷՄ *համահայկական համոզես*

նրան ընձեռեց միջազգային ասպարեզում Հայոց ցեղասպանության հիմնահարցի շուրջ տեղի ունեցող առևտրի հետնախորքին անտեղյակ Հայաստանի նոր ղեկավարությունն իր «**Ֆուտբոլային դիվանագիտությամբ**»¹:

Անշուշտ, այսօր աշխարհում բոլորն են հասկանում, որ «հետցեղասպանական իրողությունների» պահպանման, այսինքն՝ Հայաստանի տարածքների բռնագավառման և 7 միլիոնանոց Սփյուռքի առկայության պայմաններում Հայոց ցեղասպանությունը չի կարող դիտվել իբրև **պատմություն**՝ այդ բառի դասական իմաստով: Ի վերջո, «**պատմություն**» եզրույթը ենթադրում է որևէ ավարտուն գործընթացի առկայություն՝ իրեն բնորոշ դասերով: Ուրեմն՝ էթե Հայոց ցեղասպանությունը չճանաչվի գոնե որպես **փաստ**, ապա «ցեղասպանություն» հանցագործությունը դիտվում է իբրև այս կամ այն պետության քաղաքական ձգտումների իրացման լեգիտիմ միջոց՝ խարխուլելով միջազգային իրավունքի հիմքերը:

Ուրեմն՝ միջազգային հանրությունը և առաջին հերթին՝ «սառը պատերազմում» հաղթանակ արձանագրած արևմտյան երկրները չէին կարող «օրինականացնել» նման հանցագործությունը: Բայց քանի որ Հայաստանի անկախացումից հետո էլ նրանք Հայկական հարցում առաջնորդվել ու առաջնորդվում են ոչ թե բարոյաքաղաքական, այլ աշխարհաքաղաքական նպատակներով, ապա մնում է քաղաքականությունը պատմությունից, իսկ աշխարհաքաղաքական շահերը բարոյականությունից, այսինքն՝ Հայոց ցեղասպանության ճանաչումը նրա քաղաքական հետևանքների հաղթահարման հիմնախնդրից տարանջատելու գաղափարը: Այդ պատճառով՝ «հետևանքների հաղթահարում» ասելով հասկացվում է «թուրքերին» քաղաքական, իսկ հայերին՝ բարոյական հաղթանակ» բանաձևը: Ահա այս ռազմավարությունն է ընկած 2008-ին սկիզբ առած Հայաստան-Թուրքիա պաշտոնական բանակցությունների հիմքում:

Որպեսզի կարողանանք թափանցել նման բարդ թնջուկի խորքերը՝ հարցը քննենք գիտական որոշակի մեկնակետից: Հայտնի է, որ այս կամ այն իրադարձության **պատմություն** լինելու հանգամանքը որոշվում է ոչ այնքան անցյալը ներկայից բաժանող **ժամանակի** թվաբանական մեծությամբ, որքան նրանից բխող **հիմնախնդիրների** կենսունակության աստիճանով: Հայոց ցեղասպանության պարագայում ժամանակը ոչ թե հաղթահարել է հիմնախնդիրները, այլ մասնակիորեն սառեցրել և ապա՝ լիարժեքորեն վերաբացել է դրանք: Հայտնի է, որ Հայոց ցեղասպանությունը դեռ չէր ավարտվել, դեռևս շարունակվում էին Կիլիկիայի ու Իզմիրի հայության ջարդերը, երբ 1922 թվականին Հայաստանը՝ որպես պետություն, ոչ միայն **դե-ֆակտո**, այլև **դե-յուրե** կորցրեց իր անկախությունը՝ դառնալով ԽՍՀՄ-ի բաղկացուցիչ մասը: Իսկ ահա ԽՍՀՄ-ը շուրջ 70 տարի լռեցրել, կոնսերվացրել (մասնակիորեն սառեցնելով՝ պահպանել), ու նաև՝ ձևախեղել է Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման խնդիրը՝ այն վերածելով խորհրդա-թուրքական, այսինքն՝ հայ-թուրքական սահմանի օրինականության (լեգիտիմության) հիմնահարցի:

Հարց է առաջանում.

¹ Ավելի մանրամասն տես «Վեմ»-ի ներկա համարում հրապարակվող Արմեն Յ. Մարությանի «Թուրքիայի միջազգային-իրավական պատասխանատվության հիմնախնդիրը...» վերլուծությունը:

- Եթե Հայոց ցեղասպանությունը սոսկ **պատմություն** է, ապա ինչո՞ւ 70 տարի շարունակ Թուրքիան ԽՍՀՄ-ի ու Խորհրդային Հայաստանի բոլոր դեկլարաներից², իսկ դրանից հետո՝ Հայաստանի երրորդ Հանրապետությունից, պահանջել և այսօր էլ պահանջում է ճանաչել թիվ մեկ «հետցեղասպանական իրողությունը»՝ հայ-թուրքական փաստացի սահմանը:

- Եթե Հայոց ցեղասպանությունը սոսկ **պատմություն** է, ապա ինչո՞ւ է Թուրքիան «պատմությունը՝ պատմաբաններին հանձնելու» իր ռազմավարական նպատակը արևմտյան երկրների, առաջին հերթին՝ ԱՄՆ-ի աջակցությամբ, 2009թ. հոկտեմբերի 10-ի հայ-թուրքական արձանագրությունների մեջ խցկելուց հետո պատմաբաններին հրավիրում արդեն ուսումնասիրված և գիտականորեն ապացուցված փաստի կրկնակի քննության հարթություն:

- Եվ վերջապես՝ եթե Հայոց ցեղասպանությունը սոսկ **պատմություն** է, ապա ի՞նչու է Թուրքիայի նման հզոր երկրի դեկլարությունը ուղիղ 7 տարի նստել և Արևմուտքի ուղեղային կենտրոնների մշակած «պատմության հետ հաշտվելու»՝ երկու կողմերին ուղղված պահանջը փոխակերպել «պատմությունը՝ պատմաբաններին հանձնելու» հնարանքի և 2008-ին Հայաստանի դեկլարությանը ներքաշել բազմաշերտ ծուղակի մեջ:

Պատճառն ակնհայտ է. «Հայոց ցեղասպանությունը սոսկ **պատմություն** է» հարցադրումը այն միակ «**պորտալարն**» է, որը ներկա պահին քողարկված կերպով շաղկապում է ցեղասպան Թուրքիայի ու Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրը **պատմության ճանաչման** տիրույթում դիտարկող միջազգային ուժերի տարածաշրջանային նպատակները: Եվ Ցեղասպանության փաստը քաղաքական ու իրավական դաշտից պատմական հարթություն տեղափոխելու հնարավորությունը այն «գինն» է, որն առաջարկվել է Թուրքիային՝ իբրև նրա հանցագործության հետևանքների **շրջանցման** և **պատասխանատվության** պարտամտրիակը գեղչելու հնարավորություն: Դա է պատճառը, որ 2009 թ. հոկտեմբերի 10-ի արձանագրությունների վավերացման գործընթացը փակուղի մտնելուց հետո էլ Թուրքիան ո՛չ պատրաստվում է վճարել «գեղչված գինը» և ո՛չ էլ հրաժարվում է այդ փաստաթղթերից՝ դրանք համարելով իր **գործիքները**:

Պնդում ենք, որ մեր նահատակների արյունը աճուրդի հանելու այս գործընթացի բոլոր մասնակիցները հիմնավորապես աղավաղում և նենգափոխում են միջազգային իրավունքը: Զանգի այն կարծիքը, որ Հայոց ցեղասպանությունը **պատմություն** է՝ շուրջ 95 տարվա «հնության» պատճառով, անտեսում է ոչ միայն մարդկության դեմ ուղղված հանցագործության՝ ցեղասպանության համար վաղեմության ժամկետի բացակայության միջազգային-իրավական նորմը, այլև այդ 95 տարիներից՝ Հայաստանի անկախության կորստից մինչև նրա վերականգնումն ընկած 70-ամյա խորհրդային «երկաթյա վարագույրի» ժամանակահատվածը պարտադիր կերպով հանելու անհրաժեշտությունը:

Ավելին՝ հայտնի է, որ հրեաները 2500 տարի արտաքսված մնացին իրենց պատմական հայրենիքից, մինչդեռ հայերը ցեղասպանությունից հետո անգամ՝ սեփական պետությունը ստեղծեցին, որն անցած 95 տարիներից 70-ը ապրեց

2 Ավելի մանրամասն տես ՅԱՅԱԿԱՆ ՅՈՂԵՐԻ ՅՈՂՑԸ ԽՈՐՀՐԴԱ-ԹՈՒՐԶԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (1967-1973 թթ.), Գուրեն Նալբանդյանի գաղտնի գեկուցագիրը և կից փաստաթղթեր, «Վեմ» համահայկական հանդես, 2009, N 2:

ամբողջատիրական վարչակարգի կապանքների մեջ: Բայց նույնիսկ նման խեղդող մթնոլորտում հայությունը ամեն պատեհ առիթն օգտագործեց՝ հիշեցնելու համար, որ Հայկական հարցը սուկ ժամանակավորապես է լռեցվել՝ ցեղասպանության իրականացման և Հայաստանի խորհրդայնացման միջոցով, որ նրա պահանջատեր-պետությունը՝ Հայաստանը, իր վերանկախանալուց հետո հասնելու է հայ ժողովուրդի իրավունքների վերականգնմանը: Եվ այդ ինչու՞ վերջին գույգ տասնամյակներում **պատմություն** չհամարվեցին ԽՍՀՄ կազմում շուրջ 40-45 տարի սառեցված՝ **Մերձբալթիկայի** երկրների ու ժողովուրդների իրավունքները, գրեթե նույնքան ժամանակ երկու մասերի բաժանված՝ **Գերմանիայի** վերամիավորման իրավունքը, նախկին **Հարավ-սլավիայի** ազգերի մոտ վերջին տասնամյակներին նորից արթնացած ազգային ձգտումները: Ավելին՝ կատարված հանցագործությունների մասշտաբներով համեմատության եզրեր ունե՞ն արդյոք այդ երկրներին ու ժողովուրդներին բաժին ընկած ողբերգությունները Հայոց ցեղասպանության հետ:

Ուրեմն՝ 2009թ. հոկտեմբերի 10-ի արձանագրություններում ներառված «պատմական հարթության» հանձնաժողովի միջոցով Հայոց ցեղասպանության դիտարկումն իբրև 20-րդ դարում իր նմանը չունեցող, եզակի «**պատմական հանցագործություն**», ինչպես նախադեպերի վրա հիմնվող միջազգային սովորութային իրավունքի, այնպես էլ գործող միջազգային պայմանագրերի կոպիտ ոտնահարում է:

Հայոց ցեղասպանության ճանաչումը սուկ իբրև պատմական փաստ այն «երկայրի սուրն» է, որը կարող է ծառայել և՛ իբրև Հայկական հարցը վերաբացելու բանալի, և՛ ընդհակառակը՝ «**մեղմ ճանաչման**» տարբերակով այն նորից «փակելու» հնարավորություն: Բայց արի ու տես, որ Հայաստանի՝ իբրև պետության գոյության պայմաններում նման «**մեղմ ճանաչում**» անգամ սարսափեցնում է Թուրքիային: Բավական է հիշել 2010թ. հունվարի 12-ին Հայաստանի Սահմանադրական դատարանի ընդունած միայն ու միայն ինքնապաշտպական բնույթ ունեցող որոշման հանդեպ Թուրքիայի հակազդեցությունը, եզրակացնելու համար, որ վերջինս ավելի լավ է տիրապետում Հայկական հարցի մանրամասներին, քան մեր պաշտոնյաները:

Ավելին՝ ներկայումս Թուրքիայի կողմից ցույց տրվող դիմադրությունն ունի նաև **երկրորդ** պատճառը՝ սեփական ձեռքերի ազատությունը չկաշկանդելու ցանկությունը: Դրանով է պայմանավորված մեր տարածաշրջանում պահպանվող բազմաթիվ «հետցեղասպանական իրողություններից» մեկի՝ **Ղարաբաղյան** թնջուկի կազմաքանդման Թուրքիայի պահանջը: Ղարաբաղյան հիմնահարցի առկայությունը մի կողմից՝ Հայոց ցեղասպանությունը Արևելյան Հայաստանում ևս շարունակելու՝ Թուրքիայի 1918-1920թթ. փորձերի կիսատ մնալու արդյունքն է, իսկ մյուս կողմից՝ հայոց անկոտրում դիմադրական ոգու մարմնացումը:

Թուրքիան «հայերին ցավակցելու» միջազգային-քաղաքական օրակարգին հակադրում է հայկական երկրորդ պետության՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանգրվանային կազմաքանդման իր ծրագրով, որովհետև **ավելին** է ուզում ստանալ, քան 2009թ. հոկտեմբերի 10-ի արձանագրություններում ամրագրված՝ Հայոց ցեղասպանության հարցը պատմությանը հանձնելու հնարավորությունը և պատրաստ է կռվել այդ **ավելի** համար՝ անգամ

Հայոց ցեղասպանության նոր ճանաչումների հարվածներն ընդունելու գնով:

Ղարաբաղի հարցում Թուրքիայի անգիջում պահվածքի խորքում ընկած է ոչ թե Ադրբեջանի հանդեպ «խռացիոնալ սիրո» գործոնը, այլ այդ ամենի տակ թաքնված ռազմավարական նպատակը: Հետսառըպատերազմյան շրջանում Թուրքիան վերածվել է շատ թե քիչ ինքնուրույն, բայց համաշխարհային նոր ճարտարապետության մեջ չտեղավորվող «միայնակ գայլի», որն իրար հետևից փորձում է «ջարդել» այն «փարախների» դռները, որոնք հետևողականորեն փակվում են իր առջև: Նրան Եվրամիություն չեն թողնում, ուստի մնացել է միայն դեպի Արևելք ընդարձակվելու՝ **նեոսամանյան** քաղաքականությունը: Եվ Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը նորից օբյեկտիվորեն հայտնվել են հայ ժողովրդին ցեղասպանության ենթարկած Թուրքիայի ճանապարհին: Ուստի՝ անկախ նրանից՝ պատրաստ է արդյոք Հայաստանը «պատմական հարթություն» տեղափոխել Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը, Թուրքիան չի բավարարվում **մասով**, քանի որ ուզում է **ամբողջը**: Թուրքական գայլը համառորեն փորձում է իր դունչը մտցնել ամերիկյան առյուծի ու ռուսական արջի զբաղեցրած «Կովկասյան սեղանից» ներս և օգտվել «թամադային» ընտրելու հարցում վերջիններիս միջև հնարավոր հակասություններից: Եվ այսօր Թուրքիայի հակազդեցության արդյունքում և միայն ու միայն՝ **Ղարաբաղի** շնորհիվ, Հայաստանը իր կառավարիչների կամքից անկախ, դառնում է քաղաքակրթական դիմակայության համաշխարհային շղթայի օղակներից մեկը, ինչպիսիք են արևմուտքում՝ **Կիպրոսը**, իսկ հարավում՝ **Երուսաղեմը**:

Ուրեմն՝ Հայոց ցեղասպանության հիմնանպատակը՝ հայկական պատմեշը քանդելու առաջադրանքը նորից է հայտնվել Թուրքիայի քաղաքական օրակարգում այս անգամ՝ իբրև միջազգայնորեն ճանաչված Հայաստանի Հանրապետության **քաղաքական**, իսկ Լեռնային Ղարաբաղի նաև՝ **Ֆիզիկա-աշխարհագրական** չեզոքացման առաջադրանք: Վերջին խնդիրը նախատեսվում է լուծել 1918 թվականի մեթոդաբանությամբ՝ «Ադրբեջանի տարածքային ամբողջականության վերականգնման» պատրվակով: Ավելին, քանի որ Ադրբեջանն իր հերթին առաջ է քաշում ներկայիս Հայաստանի Հանրապետությունը «Արևմտյան Ադրբեջան» հռչակելու քաղաքական հնարանքը, ապա ստացվում է, որ հայ-թուրքական «երկխոսության» շաղկապումը Ղարաբաղի հարցի հետ մեր ներկա գոյությունը «Ադրբեջանով փակելու» քաղաքական ծրագիր է: Դրա համար անորոշ ժամանակով ձգձգվում է հայ-թուրքական արձանագրությունների վավերացումը, Ղարաբաղի հարցի լուծումը անհիմն կերպով կապվում է Թուրքիայի միջամտության հետ, փորձ է արվում դառնալ բանակցային գործընթացի փաստացի կողմ և խցկվել Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների մեջ: Նույն նպատակով առաջիկա մայիսին նախատեսվում է նոր՝ «Լեռնին-Աթաթուրք» գործարք առաջարկելու միջոցով խցկվել նաև Հայաստան-Ռուսաստան հարաբերությունների մեջ:

Ու քանի որ Ադրբեջանը տնտեսապես ուժեղանում է, իսկ Հայաստանը դոփում է տեղում, իր նպատակների իրականացման հարցում Թուրքիան չի շտապում՝ սպասելով այն պահին, երբ ռուս-ամերիկյան հարաբերությունների նոր ճգնաժամը Ադրբեջանին հնարավորություն կտա գտնել արտաքին հենարան՝ Ղարաբաղյան հիմնահարցի ռազմական լուծման համար:

Ուրեմն, մի կողմից՝ միջազգային հանրության անսրող աջակցությունը՝ «պատմությունը՝ պատմաբաններին հանձնելու» Թուրքիայի քաղաքական հնարանքին և մյուս կողմից՝ Թուրքիայի «ախորժակների չափավորումը»՝ Հայոց ցեղասպանության նոր ճանաչումների միջոցով, աստիճանաբար մեր երկրի ու ժողովրդի առջև ուրվագծում են **միջազգային-քաղաքական, մշակութային-քաղաքակրթական** և վերջապես՝ **տարածաշրջանային** դիմակայության առեւտրի թնջուկի առկայությունը:

Չնկատելով այս ամենը՝ չարաչար կերպով սխալվեցին «նացիոնալ մտածողի» համարում ունեցող մեր այն քաղաքագետները, որոնք կարծում էին թե Թուրքիան մինչև ապրիլի 24-ը ժամանակ է ձգում՝ առավելագույնը ստանալու և 2009թ. հոկտեմբերի 10-ի արձանագրությունները վավերացնելու համար, քանզի կրկին հաստատվեց, որ Թուրքիայի ախորժակները չեն պայմանավորվում իր հետ մեր «բարեկամանալու» հեռանկարով: Ուստի՝ կարիք չկա նոր պատրանքներ փայփայել՝ ստեղծված ծուղակից դուրս գալու առումով: Հայոց ցեղասպանությունը «պատմաբաններին հանձնելու» քաղաքականությանը կարելի է վերջ տալ միայն ու միայն 2009թ. հոկտեմբերի 10-ի արձանագրությունները «պատմությանը հանձնելու» միջոցով: Բայց ինչպե՞ս, ո՞վ թույլ կտա մեզ դիմել նման անպատասխանատու քայլի, -անմիջապես կհարցնեն «արձանագրային ծուղակն» ընկած մեր իշխանությունները:

- **Թուրքիան**՝ կպատասխանենք մենք: Հայկական հարցի քաղաքական լուծման ճանապարհին խրված՝ «2009թ. հոկտեմբերի 10-ի արձանագրություններ» կոչվող սեպը առաջիկայում հնարավոր է և անհրաժեշտ է հանել հենց Թուրքիայի ձեռքով:

Մարդկության դարավոր փորձը վաղուց արդեն ապացուցել է, որ որևէ գաղափար «սպանելու» լավագույն և ամենակարճ ճանապարհը նրա շուրջ որևէ **հանձնաժողովի ստեղծումն է**: Իսկ ահա տվյալ հանձնաժողովի հիմքում դրված գաղափարը «սպանելու» լավագույն և ամենակարճ ճանապարհը նրա հիմքում ճիշտ **հակառակ գաղափարը** դնելու հմտությունն է:

Հստակեցնելով, որ Հայոց ցեղասպանությունը, անկախ նրա «կեղծվաղենության» ժամկետից, մարդկության դեմ իրականացված **հանցագործություն** է, իսկ միջազգային ասպարեզում հանցագործությունները զնահատում են ոչ թե **պատմաբանները**, այլ **իրավաբանները**, Հայաստանը առաջիկա ապրիլ 24-ից հետո կարող է հայտարարել, որ աշխարհում ո՛չ մի իրավաբան չի կարող մերժել «ցեղասպանությունը հանցագործություն է» պնդումը, ուստիև այն իրավական հարթության վրա քննելու՝ մեր երկրի մտադրությունը: Անգամ՝ եթե Թուրքիայի համար այդքան սարսափելի է «ցեղասպանություն» եզրույթը, միևնույն է, ինչպես էլ նա բնութագրի 1915-ին տեղի ունեցածը, դրանից հարցի էությունը չի փոխվելու, եթե այն «պատմաբաններին հանձնելու» փոխարեն տեղափոխվի իրավական գետնի վրա: Բոլոր դեպքերում տեղի է ունեցել հանցագործություն՝ 1,5 միլիոն մարդու սպանություն, նրանց սեփականության ու Հայրենքի բռնազավթում: Ուստի Հայաստանն ինքը պետք է ստեղծի միջազգային իրավունքի հեղինակավոր մասնագետներից բաղկացած մի հանձնաժողով՝ Հայոց ցեղասպանության հետևանքների ուսումնասիրման համար: Իրավաբաններից բաղկացած նման հանձնաժողովը անմիջապես պետք է սկսի Հայոց ցեղասպանության արդյունքում արևմտահայությանը

պատճառված վնասների հրապարակային քննությունը՝ չսպասելով 2009թ. հոկտեմբերի 10-ի արձանագրությունների վավերացմանը կամ մերժմանը:

Հարց է առաջանում. բայց մի՞թե հենց դա չէ Թուրքիայի ու նրա հովանավորների ցանկությունը: Վճռականորեն պնդում ենք՝ ո՛չ, քանզի «պատմական հարթության» հանձնաժողովի ստեղծումը Հայոց ցեղասպանության փաստը պատմաբանների միջոցով պատմությանը հանձնելու ծրագիր է: Իսկ իրավաբանների միջոցով հարցը միջազգային իրավունքի դաշտ տեղափոխելու պարագայում հաղթահարվում է «պատմական հանցագործություն» հնարելու ոմանց մտադրությունը:

Լուրջ իրավաբանական փաստաթղթերի մշակման ճանապարհով Հայոց ցեղասպանության հետևանք **քաղաքական**, այդ թվում՝ **տարածքային**, **տնտեսական**, այդ թվում՝ **ֆինանսական**, **մշակութային**, այդ թվում՝ **հուշարձանների**, **ձեռագրերի** և այլ կորուստների բացահայտումը, արձանագրումը և դրանց վերադարձի կամ փոխհատուցման անհրաժեշտության իրավական հիմնավորումների և համապատասխան դատական հայցերի փուլ առ փուլ տեղափոխումը միջազգային առյաններ, կլինի այն համոզիչ ու միաժամանակ կանխարգելիչ քայլը, որը լիովին կփակի Թուրքիայի «հանձնաժողովային ախորժակները»: Թուրքիան, որը մշակել է Հայոց ցեղասպանության քննությունը պատմաբաններին հանձնելու և «պատմական հարթության» հանձնաժողովը Հայկական հարցի «թաղման հանձնաժողովի» վերածելու ծրագիր և հետևողականորեն հասնում է իր նպատակին, **պատմական սեպը իրավական սեպով** հանելու հակաբայլի արդյունքում ուղղակի կմոռանա «հանձնաժողով» հասկացությունը:

Պատճառն ակնհայտ է. որքան ամուր է Հայոց ցեղասպանության ճանաչման հարցին Թուրքիայի դիմադրության «արտաքին վահանը», նույնքան խոցելի է նրա ներքին կամ ներքաղաքական դիմադրողականության պատենշը: Բավական է, որ 2011թ. խորհրդարանական ընտրություններին նախապատրաստվելու մթնոլորտում Թուրքիայում հրապարակվի Հայոց ցեղասպանության հետևանքների ուսումնասիրման հանձնաժողովի որևէ եզրակացություն՝ արևմտահայության կրած ահռելի վնասների թվական տվյալների վերաբերյալ, որպեսզի թուրքական ընդդիմությունը պարտադրի Գյուլ-Էրդողան գույզին՝ 2009թ. հոկտեմբերի 10-ի արձանագրությունների մերժման կամ քաղաքական ասպարեզը լքելու երկընտրանքը: Ուրեմն՝ «պատմական հարթության» հանձնաժողովում մեզ սպասող ծուղակային բանավեճերի մեջ ներքաշվելու փոխարեն, այսօրվանից հարկավոր է առաջնորդվել կատարված հանցագործության գնահատման իրավական մեկնակետով: Այս մեկնակետի առկայության պայմաններում խորհրդարանական ընտրությունների հորձանուտի մեջ ներքաշվող Թուրքիան ստիպված է լինելու սեփական ձեռքերով «սպանել» 2009թ. հոկտեմբերի 10-ի արձանագրությունները: Ավելին, պարտավոր ենք գիտակցել, որ եկել է Հայոց ցեղասպանության անհերքելիության **պատմական ապացույցները** նրա հետևանքների հաղթահարման **իրավական փաստարկների** վերածելու ժամանակը: Այս հարցում մենք բավականին ուշացել ենք և այլևս հապաղելու ժամանակ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐ-ՄԱՐԿ 2010
ԻԿ(Ը) ԳՄԱՐԻ, ԹԻՎ 1(29), ԽՈՒՆՎԱՐ-ՄԱՐԿ 2010

ՎԵՄ համահայկական համոզան

չունենք:

Ուստի «ՎԷՄ» համահայկական հանդեսը իր ներկա և առաջիկա համարներում³ սկսում է հրապարակել գիտական ուսումնասիրություններ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման համազգային հիմնախնդրի **քաղաքական, իրավական, տնտեսական, հոգևոր-մշակութային** և այլ ասպեկտների վերաբերյալ:

TIT FOR TAT IS FAIR PLAY

Editorial

³ Հանդեսի հիմնական բաժինները պահպանվելու են, սակայն որոշ հաջորդական ուսումնասիրություններ, որոնք նվիրված են Հայաստանի ու հարակից երկրների պատմական ժողովրդագրությանը և այլ հիմնահարցերի, հրապարակվելու են ավելի ուշ: Խմբ.